

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՃԱՐԱԾ
ԼՈՒՈՒԹՅՈՒՆ



Արիս Գրիգորյանի «Ճարած Լուուություն» գրքի մասին
գրություն: 1997 թ. հոկտեմբեր
1. Բարձրագույն դասագրական
ստիպանքի փոխգործակցության
միջոցով: Կոմիտասի անվան
Հայաստանի համալսարանի
Գրականության ֆակուլտետի
գրականության ամբիոնի
գլխավոր լեզվաբան-մեթոդական
կենտրոնի կողմից: Կոմիտասի
անվան Հայաստանի համալսարանի
Գրականության ֆակուլտետի
գրականության ամբիոնի
գլխավոր լեզվաբան-մեթոդական
կենտրոնի կողմից: Կոմիտասի
անվան Հայաստանի համալսարանի
Գրականության ֆակուլտետի
գրականության ամբիոնի
գլխավոր լեզվաբան-մեթոդական
կենտրոնի կողմից:



ԼՈՒՈՒԹՅՈՒՆ




ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՃԱՐԱԾ
ԼՈՒՈՒԹՅՈՒՆ

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՃԱԲԱԾ
ԼՌՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՏԵՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1993

«Արցախ»

Ստեփանակերտ

ԳՄԴ 84Հ7-5

Գ 313

Խմբագիր
ՀՐԱԶՅԱ ԲԵԳՎԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ,
ՍՈՒՍԱՆ,
ՄԱՐԻԱՄ քաղկներյու

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Ա.

Գ 818. Ճաքած լռություն: Բանաստեղծություններ (Արիս Գրիգորյան), Ստեփանակերտ, «Արցախ», 1993.—48 էջ:

«Ճաքած լռություն» բանաստեղծությունների ժողովածուն Արիս Գրիգորյանի անդրանիկ գիրքն է, ուր տեղ են գտել նրա վերջին շրջանում գրած ստեղծագործություններից մի փունջ:

Բանաստեղծը զգացմունքային, նուրբ-քնարական շնչով է երգում հայրենիքի սերը, արցախյան ազատագրական պայքարը, հայրենի հրաշագեղ քնությունը:

Գ 4702080202
768 (01) 98 93

ԳՄԴ 84Հ7-5

jSBN5-8070-0650-X


«Արցախ» հրատարակչություն, 1993

Է ՔՍՊՐՈՍ

Մեր տան պատի տակ, մեջքս ժեռ քարին
Նստե՛լ, նստե՛լ եմ ծնվող աշխարհին:

Մեր տան պատի տակ, մեջքս ժեռ քարին
Նստե՛լ, նստե՛լ եմ քայլող աշխարհին:

Մեր տան պատի տակ, մեջքս ժեռ քարին
Նստե՛լ, նստե՛լ եմ... անցնող աշխարհին:



Տ ՈՒՆԸ

Իմ առաջին ճիշը, որ լսել է տունը,
Իմ առաջին ճիշը վաղուց չկա,
Բայց հիշում է տունը: Ու ապրում է տունը
Մեր այն հեռո՛ւ գյուղում աղամանդյա:

Ու երբ ամեն անգամ ես այցի եմ գալիս
Եվ լուռ լուռ լուսձ դռան առաջ,
Տան պատերը ասես անուրջներ են լալիս
Ու լսվում է միշտ մի անհնույս հառաչ:

Ծանրանում են մեկեն քաղերս՝ տուն եկած,
Ծնկներս լուռ ծալվում, փլվում հողիկ,
Նկարս տան պատին ծանրություն է անում,
Երբ ես պիտի պատին երկարվեի:

Ու մնում եմ շվար՝ հիմա ի՞նչ եմ, տանուն՞ք,—
Հիմա դադձն է ձգվում տանս պատին,
Տանս անքուն պատին ձգվում եղինջն անտեր,
Սպառնում է անգամ... ժամանակին:

...Իմ առաջին ճիշը, որ լսել է տունը
Մեր այն հեռո՛ւ գյուղում աղամանդյա,
Հրդեհվել է տան հետ, ավերվել է, ավա՛ղ,
Ու էլ չկա տունս՝ ճիշս չկա՛...



ԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

...Եվ ինձ նախապես աչքեր պետք չէին
Իմ չունեցա՞ծը տեսնելու համար:

Երբ ես ծնվեցի՝ մերկ ամբողջովին,
Իմ մերկությունը
Ծածկելու համար ձեռքեր փնտրեցի
Առաջին ճիշիս արձագանքներում:—
Իսկ երբ որ փնտրած-գտած ձեռքերս
Մի քիչ կարճ եղան
Ու չծածկեցին մերկությունը իմ,—
Տխուր լաց եղա:

Եվ տխրությունս երազներ ծնեց,
Կարոտներ ծնեց մաքուր ու բարի,
Կարոտով լցված մի մեծ սիրտ ծնեց
Ու իմ ուղեղում
Միտքս սկսեց կաթ-կաթ ծովանալ...

Եվ միտքս երկնեց...
Եվ ես զգացի,
Որ ինձնից ստաշ,
Գարեք ստաշ ու հազարամիակներ
Իմ նախնիները
Ձեռքեր ունեին ծնկներից հասնող,
Իսկ իմ ձեռքերը այնքան էին կարճ,
Որ չէին ծածկում ճուղիս...մերկությունս,—

Ու ես լաց եղա...:

Այդքան ժամանակ ինձ աչք պետք չեղավ,

Բայց երբ առաջին քայլս արեցի,

Ես նոր զգացի, որ ինձ աչք է պետք,—

Առաջին թա՛յլս տեսնելու համար:

Եվ ես քայլեցի դարերի միջով...

Իմ ճանապարհին

Վերելքներ եղան ու նեո անկումներ,—

Ինչքան բարձրացա՝

Այնքան կորցրի,

Ինչքան կորցրի՝

Այնքան երկնեցի,

Այնքան կերտեցի..

Ու մի այդքան էլ նորից... կորցրի:

...Ինձ աչքեր պետք չեն,—

Իմ կորցրածը տեսնելու համար:



Ռ ԵՔՎԻԵՍ

Թափորն է քայլում նեղիկ փողոցով
Ու քայլում եմ ես այդ թափորի մեջ՝
Հետևում թողած դիակներ անթիվ:

Ունկերիս մեջ դեռ գնգում է զիլ-զանգ
Կանչը գոժկանի.

—Հալիձորն ընկա՛վ, հասա՛ր, Մխիթա՛ր...

—Հալիձորն ընկա՛վ...

—Չընկա՛վ:

Ծախենցի՛ն...

Թափորն է քայլում լուսն փողոցով,
Հետևում՝ ավեր, մահ ու տարածամ:
Խարույկի միջից չեն լավում ճիշեր:
Խարույկից առաջ՝

Ողջախոհության խորհուրդն է խորին.

—Ներիր մեզ, խանում, եթե կարող ես...

Հասա՛ր, Մխիթա՛ր...

Լուս է փողոցը,

Լռին քայլում է փողոցը հոգևած,

Գնում է հեռու,

Գնում է՝ հասնի Սաթենկան դատին:

Հասա՛ր, Մխիթա՛ր...

— Սուրբ խաչ, զորավիզ չեղար մեզ կյանքում,—
Պատին է զարկվում թաղը գազազած:

Թափորն է քայլում
Տխուր ու՞ր հոգևած...

Լողբա, Բարխուդար, դու քո բախտը սև,
Գաժաճան որդի սևելու համար,
Որդի, որ երբեք Գոհար չդատավ...

— Հալիձորն ընկա՛վ...

Թափորն է քայլում...

— Թե՛ Այունիքն, Արցախն առնի օսմանլում՝
Կտիրի և ողջ աշխարհին հայոց...

Կտիրի՛, անշո՛ւշտ:

Հասի՛ր, Մխիթա՛ր...

Մահվան թափորն է քայլում փողոցով:



Ի ԶԱԲԵՆՆԱՅԻՆ

Ա

Դու ասում ես, որ անունդ Իզաբելլա է,
Դու ասում ես, որ ապրում ես Բեյրութում Բեռու,
Դու ասում ես... ու իմ դիմաց հառնում է կրկին
շունացվող մի հին տեսիլք՝ մաշված շորերում:

Դու ասում ես... Ու ցնցվում է տեսիլքը մեկեն,
Հերոսական մի հի՛ն էրկիր կանչում է ինձ տուն,
Չկալացած մի երազ է մարմրում իմ մեջ
Ու ծախս է ինձ խեղդում կրկին՝ կարտոնեղով գուր:

Դու ասում ես... Ու ելնում են տղաները ծուռ,
Ելնում են, որ հայ քարերը հայ մնան կրկին,
Ելնում են, որ վերակերտեն ավեր տունը մեր,
Որ մոռացվի դանթեական առասպելն այն հին:

Մավրայն կրկին արյան մեջ է ՀԱՅՐԵՆԻՔԸ մեր,
Կրկին մահվան մաղձն է պատել ԱՆՊԱՐՏ Արցախին:
(Դանթեական մղձավանջն է ահագնանում, տեր,
Տեր, որտե՞ղ է ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԸ վերջին)...

...Դո՛ւ ասացիր, ես չուզեցի վիշտդ բորբոքել,
Դո՛ւ ասացիր, Իզաբելլա, չուզեցի, ների՛ր...

23.06.1991

ք. Երևան

Բ

Քույր իմ, Իզաբել, քո դաշնամուրը
Մեղմ նվագում է հեթհովեն, հախ,
Իսկ արցունքների հնչյունների հետ
Լոռ գլորվում են քեզնից անկախ:

Դու արտասովում ես և արցունքների
Հատ-հատ ընկնում են քո աչքերից,
Դու արտասովում ես և արցունքների
Ցավն ու թախիծն են պարուրում ինձ:

Դու արտասովում ես և արցունքների
Հատ-հատ ընկնում են իմ մատներին,
Մատներս ցավից անհույս պղծում են,
Մատներս՝ ցավիդ անհույս գերին:

Դու արտասովում ես... Իսկ ՀԻՆ ԵՐԿԻՐԷ
Մշուշ է թվում հի՛ն ու անցա՛ծ,
Բայց անցած ցավը դեռ կրկնվում է,
Իզաբելլա, քույր, խենթ ու տխրած:

...Բայց տխուր դեմքին քո, Իզաբելլա,
ԱՐԵՎ, ու ԼՈՒՅԱ եմ ես նշմարում
Եվ հավատում եմ, որ քո ԵՐԱԶՐ
Չի ԹԱԳՎԻ ՈՉ ՄԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ:



Կ ԱՆՉԵ, ԿՈՌԻՆԿ

Մեր հի՛ն գրուում հիմա թուրքի կո՛ւնկ,
Մեր հի՛ն հողի վրա թուրքի հետքե՛ր,
Մենք քնո՛ւլ ենք անցել՝ կանչե, կոունկ,
Թե արթուն ենք՝ ո՛ր է կոիվը մեր:

Կանչե, կոունկ, կանչե՛ գնանք ի մարտ,
Կանչե, կոունկ՝ քանի ջանել ենք մենք,
Կանչե, կոունկ՝ էլի թող շատանանք,
Կանչե, կոունկ՝ մենք դեռ պետք է կովենք:

Մեքքը մեր չի ճկվի երբեք մարտում,
Մենք դեռ պետք է կովենք, պետք է կովենք,
Մունկ չենք չոքի երբեք՝ կանչե, կոունկ,
Կանչե, կոունկ՝ գնանք կովենք-մեռնենք:

Գնանք կովենք-մեռնենք, հալոթենք ու զանք,
(Եվ կսագի՞ արդյոք մեզ պարտություն,
Մենք եղել ենք անպարտ, եղել ենք, կանք),
Կանչե, կոունկ՝ գնանք, կանչե, կոունկ...



Մ ԵՆՔ

Մենք կորգին լեզվանի չէինք,
Բայց կարգին... համեստ ձևացանք,—
Ի՞նչ էր հին կյանք-ապրուստը մեր,
Հին կանքով սպրել թերացանք:

Ընտրեցինք ուրիշ ճանապարհ,—
Երկինքվեց մեր բռունցք-ոգին,
Բայց հագիվ հասկացար, աշխարհ,
Թե՞ դեռ չես հասկացել կարգին:

Մենք կարգին անխելք էլ չէինք,
Բայց կարգին... հիմար ձևացանք,—
Մեր դարում՝ կոտորած, սպե՞ր...
Գաղթական ու... գաղթ էլ տեսանք:

Եվ ինչպե՞ս մենք աչտոել, աչտո
Ծրջվենք ու... միջնադար գնանք:
...Մենք կարգին ձևավոր էինք,—
Ո՞նց կարգին... անձև ձևանանք:



Չ ԻՐԱԶԱԿԱՆՉ

1

«Դարաբաղը մորս կանչն է...»
Մայր երգեցիր շարունակ:

Երկրի ցավը հոգուդ ճիչն էր՝
Մայր երգեցիր շարունակ:

Ավեր Անին քո թախիծն էր՝
Մայր երգեցիր շարունակ:

Ծանր ցավ էր քեզ Արցախը՝
Մայր երգեցիր շարունակ:

Ունկերիդ մեջ «Ջելէ լաո...»
Մայր երգեցիր շարունակ:

Ուշանում ենք, երթանք, բավ է:
...Մայր երգեցիր շարունակ:

2

Հեովում է քո երազ, քո մտրազ Մասիսը,
Հեովից քեզ տենչում է, կանչում է Մասիսը,
Թախծում ես դու մենակ, տխուր ես և, գիտե՛ս,
Այս, հեովում տխուր է ու...լուտ է Մասիսը:

3

Գտնե՛ի ճշմարիտ ու վեհ այն հնարը,
Մտնե՛ի ես, Ծիրազ, քո սիրո աշխարհը:

Երգերով հոգեթով, վերքերով անհատնում
Լցրել ես աշխարհն ու բո...«Սիրո բնարք»:

4

Խիղճդ շփնած մնաց, աշխարհ, խիղճդ քնած մնաց,—
Մասխի հեգ բանաստեղծն էլ այս աշխարհից գնաց:

Էլ բո ի՞նչն է աստվածային, աստվածդ թող մեռնի,
Հայոց հույսի աստվածային բանաստեղծն էլ լռի:

Էլ ո՞վ պիտի աշխարհասփյուռ մեր աղոթքը կարդա,
Սիփան, Վարազ, Անի, Արցախ, Ղարս, ձեր հույսը վաղվա:

Վանա ծովից փչող հովից էլ ո՞վ պիտի շիկնի,
Հայոց Գոմպեյ-Անիի սուրբ պարսպի տակ քնի:

Էլ ո՞վ պիտի հեծնի հույսի իր ոգեղեն ալ ձին,
Թե՛ չեմ մեռնի, մինչ չհասնեմ իմ ազատված Մասսին:

Ինչպես Ծուշին...Քնած մնաց, խիղճդ քնած մնաց,—
Հայոց հույսի աստվածային բանաստեղծն էլ գնաց...

5

Սիրում եմ ձեզ, աշխարհ, մարդիկ, բուրբիդ,
Բայց պաշտում եմ Ծիրագին,
Որ փայտե ձի հեծնեմ նրա պես մի օր
Ու հասնեմ իմ մորազին:

Փայտե ձիով հասնեմ զազաթը Մասի,
Սարիս գլխին կանաչեմ,
Փայտե ձիով աշխարհներս բերեմ տուն,
«Տիեզերքն էլ նվաճեմ»:

Ազգ իմ, սուրբ է սարդ Հայկիդ անան սուրբ,—
Երբ էլ լինի՝ կգա տուն,
Սակայն հողմ է հիմա դեռ չսար աշխարհում
Եվ թշնամիդ է արթուն:

Գուցե մի օր ինձ հաջողվի (ո՛ր է, ու՛ր...)
Ազգս հանեն լույս եզերք,
Սակայն Մասսի գլխին բույն է դրել բուն,
Եվ արթուն է, ազգ իմ՝ հեզ...

6

Իմ ազգը հեզ չէ,
Ոստիսին՝ տեզ է,
Ոստիսի սրտին՝ սուր ու դանակ,
Իմ ազգը հուր է,
Թշնամուն՝ սուր է,
Թշնամու մուխը մարող բանակ:
Անհուն է, խենթ է,
Բռունցք է, զենք է,
(Արցախում կոհիվ, ավեր-ավա՛ր...),
Եվ նա չի պարուկի,
Ոնց Ավարայրի
Մեր այն հի՛ն կովում օրհասական:
Ոչ, նա չի պարուկի,
Կկանգնի ոտքի,
Կկապի որդու՝ Դավթի գոտին,
Որ գետնի նրան,
Մի ակնթափում—
«Յոթ միլիոնանոց» իր ոստիսին...



Ե Ս ԿՈՒՋԵՏԻ ԼԻՆԵԼ...

Գագիկ ՊԱՏՎԱԿԱՆՅԱՆԻ հիշատակին

Ես կուզեի լինել մեր քարերի նման,
Մեր քարերի նման հաղթ ու կազմում,
Լինել կուպիտ, անուաջ ու քարեղեն...հմա,
Քարերի պես քնած, նաև...արթուն:

Քարերի պես մամուած՝ իմաստնացած խոհով,
Քարերի պես խոնարհ, նաև...հպարտ,
Հողմերի դեմ էլնել աներկյուղ ու...ահով,
Կովել-հաղթել, մեռնել՝ մնալ...անպարտ:

Ես կուզեի լինել մեր քարերի՝ նման...

08.07.1992

ք. Ստեփանակերտ



Ժ ԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արթուր ԴԱՆԻԵԼՅԱՆԻ հիշատակին

Մութը թանձրացավ...

—Դե, լավ, ես գնամ,—ասաց աղջիկը:

—Մի քիչ էլ մնա,—թախանձեց տղան

Ու բռնեց ձեռքը,—

Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Մութը թանձրացավ...

Հեռվում, ինչ-որ տեղ, ծղրիղը երգեց,

Մի կտորած լուսին

Քարափի զխից ձորը գլորվեց.

—Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Քամին չէր լուռ,

Չէր քնում քամին:

Թվում է՝ քամու քունը փախել է՝

Պահվել խավարում,—

Քամին ի՞նչ անի,

Որտե՞ղ որոնի...

Քնել է ուզում աղջիկը ասես...

—Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Տղան շուրմ էր վարսերն աղջկա:

Աղջիկը խոնարհ գլուխը կախել,—

Չգիտե՞ր՝ գնա՛ր, չգիտե՞ր՝ մնա՛ր...

Հեռվից ծղրիղի երգն ալեքսում էր.

—Մի՛ գնա, մնա՛...

Քարափի գլխից ձորը գլորված
Լուսինը կարծես ձորից կանչում էր.
—Մի՛ գնա, մնա՛...

Քամին չէր լուռ.
—Մնա՛, —խնդրում էր:

Տղան չէր խոսում,
Տղան լուռ՛ւմ էր:

Աղջիկը խոնարհ գրոխը կախել,—
Չգիտե՛ր՝ գնա՛ր,
Չգիտե՛ր՝ մնա՛ր...

Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Աղջիկը լուռ էր:
Հանկարծ...ի՛նչ եղավ՝ դեմքը վառվում էր.
—Թո՛ղ, ի՞նչ ես անում...

Տղան կանգնել էր մեղավորի պես՝
Ծրթունքախառը սերը շարթերին:
Տղան լուռ՛ւմ էր...

Աղջիկը փախավ եղևիկի նման:
—Մնա՛, խնդրո՛ւմ եմ,—աղերսեց տղան:

Խավարը նրան կրանեց իսկույն...
Ինչ-որ տեղ իսկույն դարպասը ճոսաց.
—Չմնա՛ց,
Քնա՛ց...

10.04.1992
գ. Կոճողոտ

Ի ՆՁ ՑԱԿ ՏՈՒՐ...

Ինձ ցավ տուր,—
Ես ցավը հեշտ եմ տանում:

Տառապանքը, որ ծնվել է սիրուց,—
Իմ սիրուն է:

Իսկ ստանց արտի,—
Մեռնելը դժվար է խիստ:

...Ասրե՞լը,—
Անհիմաստ ու սին:



ԵՌՆԵՐԸ

Ես ձեռքս պարզում եմ դեպի
Լեռներն իմ խորխոս, աներեր
Ու իմ դեմ հասնում է հուզից,
Երազից ծնված մի սեր...

Ես ձեռքս պարզում եմ դեպի
Քարձունքը մարդկային հոգու
Ու տեսնում դարերով տանջված,
Ոխակալ ու նեղ դարերի
Մրմունջը շորթերին դաջված
Ու տանջված, տառապած մեկին:

Դարերը անցել, գնացել,
Տանջանքն է սակայն մնացել
Ու դաջված մրմունջն անմեկին...
Ես ձեռքս պարզում եմ նորից
Դեպի իմ հանգիստ լեռները
(Լեռներ, որ ելել են հիմա,—
Մինչև վերջ պայքարեն պիտի),
Թվում է, թափծում են նրանք,
Երազում խոհերով խոկում
Ու անցած-գնացած դարերի
Արցունքն ու մրմունջն են ջոկում...



ԵՐԶԱՆՎՈՒԹՅՈՒՆՍ...

Գորգին ՎԱՊԴԱՆՅԱՆԻ հիշատակին

Երջանկությունս, իմ Արցախ աշխարհ,
Քո անունն է լույս՝ իմ բախտի պունջ,
Ապրել քեզ համար, կովել քեզ համար,
Զոհվել քեզ համար՝ երջանկություն է:

Ապրում եմ կյանքում միշտ քո հավատով
Ու քո սիրով եմ շնչում ես կյանքում,
Քաջում լուսաշող քո ճանապարհով,
Արցախյան եկրի Հանրապետություն:

Դժվար է ապրել սուսնց հավատի,—
Հավատը պետք է դրոշ դարձնել,
Հավատով հաղթել ճենգին, կավատին,
Հավատով հաղթել ճամփաներն անել:

Երջանկությունս հենց այս է, որ կա,
Երջանկությունս ազատ ապրելն է,
Երջանկությունս կյանքն է արևկա,
Ու մարդկանց ճամփին միշտ արևելն է:

Դու ես, Արցախ իմ, երջանկությունս,
Սերս, երազս, հավատս դու ես,
Ես ի՛նչ՝ նույնիսկ կես ակնթաթք չկամ,—
Իսկ դու մի ամբողջ հավերժություն ես...

Տ ԽՐՈՒԹՅՈՒՆ

Ես ապրում եմ աշտօր տառապանքի հեքով,
Տառապանքի հեքով, Գան՝ ցամի,
Սակայն դեռ կան մարդիկ, որ ապրում են տենդով,
Քարանձավի տենդո՛վ, քարանձավի՞:

Եվ իրենց իսկ կերտած քաղաքները մի օր
Հիմնահատակ գուցե և ավերեն,
Բայց և գուցե թողնեն քաղաքակիրթ մարդկանց,
Իրենք՝ անձավներո՛ւմ «տնավորվեն»:

Ու մոռանան լեզուն մարդկայինի, սիրո,
Ապրեն անձավային կյանքով վայրի...
...Ավա՛ղ, դեռ կան մարդիկ, որ ապրում են տենդով
Քարանձավի, այն հի՛ն քարանձավի:



Դ ՈՒ ԱՊՐՈՒՍ ԵՍ...

Արթուր ԽԱԶԱՏՐՅԱՆԻ հիշատակին

Կարծես թե երբեք քեզ չեմ տեսել,
Չեմ սեղմել ձեռքդ երբեք կյանքում,
Բայց... հանդիպում եմ քեզ հետ միշտ էլ
Երազներիս մեջ՝ բուն, թե արթուն:

Ծրջում եմք մեկտեղ գիշեր-ցերեկ
Մեր Կոնդորտում՝ աստճո թաս,
Դու պատմում ես ինձ մարտերից թեժ,
Բայց արթնանում եմ՝ արդեն... չկաս:

Իսկ Ցեխ-ձորում դու... ասում եմ, թե...
Իբր... զոհվել ես դու արկից կույր,
Մի՞թե ճիշտ է դա, ճի՞շտ է, մի՞թե,
Ես չեմ հավատում դրան, Արթուր:

Դու սպրում ես, կաս, դու չես զոհվել,
(Ստում եմ նրանք, ստում, անգին),
Ես հանդիպում եմ քեզ հետ միշտ էլ
Իմ երազների ճանապարհին...

23.10.1992

ք. Ստեփանակերտ



Զ ՐՈՒՅՑ Դ. ՍԵՎԱԿԻ ԴԻՍԱՆԿԱՐԻ ՆԵՏ

Ես կանգնում եմ կրկին քո պատկերի ստաշ
Ու դու կրկին իմ դեմ քո մեծ սիրուն ես բացում,
Գու խոսում ես ինձ հետ անմահների ձայնով,
Անմահների սրտից ինձ հետ խոսում ես դու:
Ու տանում ես դու ինձ ճանապարհով սիրո,
Քո սիրո հետ նորից լուռ մտորում,
Գու դառնում ես հառաչ, Կոմիտասյան մորմոր,
Վերջում... լո՛ւլս ես դառնում,—
Լո՛ւլս եղիցի՛...

Միևնդեռ հեռվից-հեռու՝ մշուշների միջից
Ժպտում եմ ինձ հպարտ Մասիսները
Ու խշշում եմ հանդարտ քո հաչացքի ներքո
Մեր նաիրյան կանաչ բարդիները:

(Զարմանալի բան է,—

Այս ե՛րբ, ինչպե՛ս եկավ

Ու այս ինչպե՛ս կիավեց գիշերը...):

...Հրաժեշտ եմ տալիս ու հեռանում կամաց:

...Գուցե քնով անցնեմ,

Գուցե մնամ քնած,

Գուցե վաղը ես քեզ այցի չգամ:

Այնժամ իմացիր, որ էլ ես... չկամ,

Իսկ դո՛ւ,—

Դու կաս միշտ էլ,

Ու կիինես դարեր,

Ինչպես հայոց բարդի,

Հայ Մասիսներ...

§ ԽՈՒՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Եղբորս՝ Անդրանիկին

Պատել է սիրոս մի հի՛ն դառնություն ու... քե՛ն:
Եկել՝ չոքել է բակում նոր տարին արդեն:

Եկել՝ չոքել, ուր-որ է՝ դուռս կբախի,
Սամփել տղաս կբացի դուռն առանց վախի:

Եկել՝ չոքել է, սակայն եղբայրս չկա,
Բաց թվում է՝ ուր-որ է, հենց հիմա կգա:

Կգա ու միշտ վայրկյանին դուռս կբացի,
Եվ կարոտած տանս հետ կնստի հացի:

Կգա: Սակայն անցնում է վայրկյանը նշված,
Հին է դառնում նոր տարին, տխու՛ր ու...անցած:

Ու չի գալիս եղբայրս: Դառնություն է ծով:
Լուռ անցնում են օրերս՝ տխուր ու մոլոր:

Լուռ անցնո՛ւմ են օրերս...Սիրոս ցա՛վ է գոր,—
Ուրախանալ չի թողնում տխրությունս լուռ:

01.01.1993

բ. Ստեփանակերտ



Գ ԻՅԵՐԱՅԻՆ ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1

Գիշեր է՝ տասն անց տաս, ուշ է,
Խախտված է ժամը պարետապին,
Պարեւոր գիտե՞ այդ մասին,
Գիշեր է՝ տասն անց տաս, ուշ է:

Քաղաք իմ, քո օդը մաքուր
Տասը թույլով «շատ» շնչեցի,
Գիշեր է՝ տասն անց տաս, ուշ է,
Խախտված է ժամը պարետապին:

2

Հիմար է հիմա գիշերը,
Մեռակ եմ հիմա փողոցում,
Կրծում է հոգիս ու խցում,
Հիմար է հիմա գիշերը:

Կրծում եմ մարմինս ու անցնում,
Խոցում եմ հոգիս հուշերը,
Հիմար է հիմա գիշերը,
Մեռակ եմ հիմա փողոցում:



Մ Ի ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արամայիսին

Մինչ արևոք կկանչեր՝ ոտքի վրա էր արդեն,
Չին չափ գցած կբերեր Յեճին աղբբում ջրելու,
Տանձենու տակ Եվայի՝ հանրում նա ձին կկապեր,
Հետո անտառ կգնար՝ լոբու ճիպոտ քաղելու:

Հետո խաղով կտարվեր՝ կմոռանար ամեն ինչ,
Նոդից երան կկանչեր մայրը՝ մեռակ ու հոգնած,
Խաղը իսկույն կթողներ, որ գնար մոր հետ ցափի,
Թունրի շուրթին կշիկներ հետո, ինչպես...թոնրահաց:

Սակայն մի օր, մի սև օր կախվեց օդում լուրը չար,
Կախվեց օդում ու մնաց ու քայլերը երերում
Երկար ու լուռ ծաղվեցին, գիշեր-ցերեկ, անընդհատ
Հոր հետ տափարն էր քշում ու չէր հոգնում քայլելուց:

Ու չէր հոգնում քայլելուց ու քայլում էր նա տխուր,
Խաչենագետը անցավ դեռ լույսը լավ չբացված,
Լքված գյուղը ցավ էր լուռ, որ սեղմվել էր կոկորդում.
—Մնա՛ց Անուշ տանձենին, Խաչունց աղբբուրը մնա՛ց...

...Խաղում էր նա քրոջ հետ, անհոգ, բակում «Գարունի»,
Խաղում էր ու չգգաց էլ, թե ոնց արկի մի բեկոր
Հասավ՝ հնձված խոտի պես իսկույն փովեց ասֆալտին...
...Իսկ աչքերում Ավաթոյի՝ դեռ վերջին շունչն է եղբոր:

23.01.1993

բ. Ստեփանյաններ

Ղ ՈՆ ԳԱԶԵԼԻՆ

Դուդդ բլաց է և անա լուռ մտնում եմ ներս, գազել,
Սիրահարված քո ոգուն, սիրահարված քեզ, գազել:

Դեռ ատում էն, թե դու քո դարբն ասրել ես վաղուց
Եվ հիմա նոր օրերին այլևս պետք չես, գազել:

Այլևս չես թովում դու իբր սրտերը մարդկանց,
Իբր էլ այն չես հիմա, իբր դու այլ ես, գազել:

Իբր էլ չես այրում դու, կրակ չունես իբր էլ,—
Երախտամոռ եմ նրանք, դու քո թախտը տես, գազել:

Դու, որ ասրել ես մինչև Տերլան, Չարենց ու Ծիրազ,—
Այսօր պիտի չլինե՞ս,—ախ, դու հիմար, ճեզ՝ գազել:

Ինչքան ուզում եմ՝ ասեն, թե հին ես դու, հնացած,—
Ապրիլի նախկին քո կյանքով, նոր օրերի կես՝ գազել...

Եվ սիրասթափ աշխարհը քեզ հետ նոր սեր կկապի,
Ներիք նրան ու մնա, ներիք՝ դու ինձ պես, գազել:



Գ ԱՉԵԼ ՍԻՐՈ

Կնոջս՝ ՌՈՒԶԱՆԻՆ

Նորից գարուն էր ու նորից սեր էր,
Սիրտ բացի լույս, սիրտ գիշեր էր:

Մինչ կմտնեիր հյուսվար սրտիս,—
Երջանկությունս ամպից էլ վեր էր:

Վսեմ դերերից անմասն էի ես,—
Ինք՝ մերժվածի ու ցավի դեր էր:

Մինչև քո գալը անհույս էր սիրտս,
Բաց սխրտս մահ հաճատի տեր էր:

Որ գալու ես դու մի գեղեցիկ օր,—
Հավատի հունդն այդ արգասաքեր էր:

Դու էլիս մի օր: Թախծաբույր տանս
Երջանկությունս արդեն տանտեր է:

Եվ բարություն ես անմեղությունս,
Իսկ ցավս արդեն քթ սարից էլ դեն է:



Գ ԱՋԵԼ ՊԱՊԻՍ

Նա մե՞ծ ապա-պապ Խաչունց Անդրին էր,
Ականջը՝ ձայնի, աչքը հանդին էր:

Նա հանդի կանչը զգում էր անձաղն,
Գնում էր՝ ճանփան հողի կանչին էր:

Մանուկ էր հանդում մինչև ուշ գիշեր,—
Մեճամյ չէր, ընկեր կար՝ Ծիր-Կաթինն էր:

Լինում էր՝ հոգնած քնում էր հանդում,
Իսկ թոռան աչքը միշտ էլ ճանփին էր,

Թե, կգա պապը, հանդ կզնան, բայց
Թոռան երազը հանդից անդին էր:

Պապը գալիս էր, լցվում էր թողը,
Բայց հանդ չէր գնում, հանդը...պապինն էր:

Պապը աշխարհում այլևս չկա,
Թողը մեճացել, աչքը...հանդին է:



Գ ԱՉԵԼ ՏՍՏԻՍ

Հինա հուշից քո անգոռ ես միտում եմ, տատ, ներիր,
Տես, կրկին ուսքդ եկել՝ աղերսում եմ, տատ, ներիր:


Խրտ է բուսնում քո շիրմին՝ այնտեղ, հեռո՞ւ մեր գաղտնի,
Իսկ ես այստեղ՝ քաղաքում լուռ տանջվում եմ, տատ, ներիր:

Մոռացել ես երևի չարաչյուհներս բոլոր,—
Դու ներող ես եղել միշտ, այս անգամ էլ, տատ, ներիր:

Ասում էիր՝ կզոջաս, երբ մեծանաս դու մի քիչ,—
Մեծացել եմ արդեն, տես, ու զոջում եմ, տատ, ներիր:

Հաճախ ցած էմ պատճառեղ, հաճախ էլ չեմ լսել քեզ,
Հինա այրող քո ցավից լուռ այրվում եմ, տատ, ներիր:

Մնացել է քեզնից աչդ անշիրմաքար մի շիրիմ,—
Ես ինձ ներել չեմ կարող, դու ինձ գոհե, տատ, ներիր...



Գ ԱԶԵԼ ՄԵՂՍԱԿԱՆ

Ամեն անխիղճ չարի համար մեղավորը մենք ենք,
Մոռվ սարի գավի հաւար մեղավորը մենք ենք:

Ապերվել են մեր տները, մեր քարերը խոտուն,—
Ամեն կորած քարի համար մեղավորը մենք ենք:

Նոր դավեր են նյութում հիմա, նոր տներ են քանդվում,
Այս մոլեգնած դարի համար մեղավորը մենք ենք:

Նոր օրերի հովով տարված, նոր անուրջներ երգող,
Աններ երգի, լարի համար մեղավորը մենք ենք:

Մեղավորը մենք ենք, որ էլ քամին սեր չի հուշում,
Այլ Դավ: Նրա դավի համար մեղավորը մենք ենք:

Մեղավոր ենք մենք, որ դարը մեզ նոր ցավ է բերում,
Լոռու ենք՝ այդ ցավի համար մեղավորը մենք ենք:

Մենք ենք: Մեղավոր ենք: Դեմ չենք կանգնում չարին,
Չարի հարբած գավի համար մեղավորը մենք ենք:

Հավատում ենք մինչև անգամ չարի բերած...լավին,—
Մեր այս «փոքրիկ» բացի համար մեղավորը՝ մենք ենք:



Գ ԱՋԵԼ ՄՈՐՍ

Միտով ու քնքշությամբ

Մայր, կուզեի եղևի դրախտները բերել քեզ,
Տունդ լցնել երազով ահագնացող ծովի պես:

Թեկուզ հոգնած ու հլու, բայց համարձակ ու համառ
Ես կրկին դեմն սունեի հորձանքների չար ու...հեզ:

Իսկ դու համակ տխրություն, համակ տքնանք՝ ժպտապիր
Եվ չերևար քո դեմքին արտասուքի շիթը կեզ:

Ես կուզեի, որ քեզ հետ լինեիր երազդ կյանքում,
Որ քո որդին քո գրկում վերջին իր շունչն էլ տար քեզ:

Բայց աղմկում եմ էլի ալիքները փոթորկի,
Կրկին ոտքի եմ ելնում ավերելու սիրտդ, տես:

Ու մոլորվել եմ պնդպես, որ չգիտեմ՝ ինչ անել,—
Փոթորկի դեմ հանդիման ինչպե՞ս մեռակ թողնեմ քեզ:

...Թեև գնալս ես ուզում, բայց որտեղ էլ ես լինեմ,
Թեկուզ վերջին իմ շնչում՝ պիտի կանչեմ էլի... ՔԵԶ:



Գ ԱՁԵԼ ՊԱՏՐԱՆՔԻ

Էլ չի հանչում ինձ Գեղեցիկան ծորը
Եվ իմ մանկության սիրած աղբյուրը:


Մի վերջին ճիգով քարերը լիզել
Ու...կտրվել է մեղրահամ ջուրը:

Լուռ քարացել է քարերի վրա
Քարերին թառած ջրի փրփուրը:

Անհույս նստում եմ լուռ աղբյուրին
(Ինչ ծանր է նրա սղո լուռությունը):

Աչքերս են հանկարծ ծանրանում տխուր
Ու ջուր է դառնում աչքերիս հուրը:

Եվ արթնանում են քարերը կարծես,
Կոտրում աղբյուրի լուռ քարությունը...



Գ ԱԶԵԼ ՏԽՐՈՒԹՅԱՆ

Արթուր ՎԱՐԴԱՆՅԱՆԻ հիշատակին

Ակնթարթներ կան քո կյանքում, որ ներկա եմ եղել,
Կան էլ՝ ինչ-ինչ պատճառներով բացակա եմ եղել:

Հետո ինքս ինձ քարին տվել, տառապել եմ երկար,
Քանզի ցավիդ հոգով, տենդով միշտ վկա եմ եղել:

Միշտ ներկա եմ եղել ցավիդ, թեկուզ՝ հեռվից-հեռու,
Հետո եկել, մատել հողիդ, միշտ...երկար եմ եկել:

Հետո եկել՝ հողակոշտդ ես գրկել եմ ամուր,
Հողաշերտիդ՝ մի տխրության փուշաքար եմ եղել:

Թեև դաժան ճամպատագրի մուռլ քմայքներին
Ծարսհատչալ իմ տխրությանք միշտ աննար եմ եղել:



Ն ՎԱԳՆԵՐ ԱՐԱՐԿՈՂ ԼՈՒՅՍԻ

Լալիս է գիշերը մեղմիկ,
Գիշերը անձրև է մաղում
Ու ձորի ոտենու ճյուղին
Անձրևը շողում է շաղով:

Իսկ քամին՝ փոթորկված, հուզված,—
Ոտենու խոհերն է խառնում,
Ոտենին՝ թեև բզկտված,
Բայց հողին ամուր է կանգնում:

Դանդաղում, քնում է քամին,
Ոտենին անջում է հանգիստ,
Բայց էլի անձրևը մաղում,
Գիշերը լալիս է մեղմիկ:

Գիշերվա քողի տակ, մթնում
Քնել են աղջիկն ու տղան,
Ինչ ո՞ւշ է լույսը արարվում,
Որ նրանք համկարծ...չարթնանան:



ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Առաջին սերը միշտ լուռ է լինում,
Քնքուշ է լինում սերը առաջին,
Առաջին սերը տխուր է լինում
Ու... փուշ է լինում սերը առաջին:

Առաջին սերը մաքուր է լինում,
Ազնիվ, անարատ՝ սերը առաջին,
Առաջին սերը թաքուն է լինում,
Ազնիվ ու...անհայտ՝ սերը առաջին:

...Սիրում են իրար ծաներն ու քամին
Ու նրանց սերը միշտ լուռ է լինում,
Արևը՝ հողին, տերևը՝ ծառին
Միշտ էլ առաջին սիրով են սիրում:

Լինում է՝ հաճախ լքում են իրար
Հողին՝ արևը, ծառին՝ տերևը,
Բայց նրանց միշտ էլ դարձի է բերում
Ու կապում իրար առաջին սերը...

Առաջին սերը միշտ վեճ է լինում,
Անկեղծ, անկաշտ՝ սերը առաջին...
...Առաջին սիրով ապրել միշտ կյանքում
Ու սիրել իրար սիրով առաջին:



Պ ԱՊԻՍ ԼԵՔԻԱԹԸ

Պապս սիրում էր հեքիաթներ պատմել,
Հայրս չէր սիրում բնավ հեքիաթներ:
Երբ ես մեծացա, պապս էլ չկար
Ու ես մնացի հեքիաթի ծարավ...
...Եվ եղեմական ծագիկը ձեռքիս
Հեքիաթ-գրքերում լուռ թափստեցի:
Փնտրեցի անվերջ հավթին Հազարան,
Որ տանեի իմ սիրած աղջկան:
Օրջեցի անվերջ սև-մուր շախարհում,
Որ գարուն էր միշտ ու միշտ...սև շիրում:
Տեսա դևերին ես յոթգլխանի,
Աղբյուրը փակող արևոտ վիշապին:
Եւ հանդիպեցի երբ ծաբավ մարդկանց,—
Խղճահարվեցի, խղճացի նրանց:
Փրկեցի աղբյուրն արևոտ վիշապից,
Գարունն ազատվեց իր սև շղարշից:
Ես դեռ շատ երկար կթափառեի,
Սակայն լույս աշխարհ պիտի դուրս գայի:
Եվ դուրս կգայի իրոք լույս աշխարհ,
Եթե ներմակին նստեի միայն:
Խոչերը խելատ դեռ կուլում էին,
Երբ ընկա մի կերպ ներմակի մեջքին...

.....
Ու...տուն հառա ես առանց հեքիաթի,
Չգտած կորած հեքիաթն իմ պապի...



Տ ԱՍՍ

Տասու իր վերջին օրերն է ապրում,
Տասու մահվան հետ արդեն հաշտվել է,
Տեսնես մանկության օրե՞րն է հիշում,
Թե՞ պատանության լույս գիշերները:

Կամ գուցե հո՞րն է նորից վերհիշում,
Մորը չի հիշի՞ մայր չի տեսել նա,
Գուցե եղբո՞րը, քրո՞ջն է հիշում,
Որոնցից ոչ-ոք այլևս չկա:

Թե՞ ամուսնուն է նորից վերհիշում,—
Բարի, մարդասեր այն Խաչունց Անդրին,
Որն ազնիվ գործով հայրենի գոտում
Վաղուց է կերտել իր վեճ կիսանդրին:

Ու շշմում է ծանոթ անուններ,
Որոնք եղել են ու հիմա...չկան:
Եշմում է լուռ, նախազգում նաև,
Որ մահը շտառով իր դուռն էլ կգա:

...Տասու իր վերջին ժամերն է ապրում,
Տասու աշխարհից պիտի հեռանա...
Ես այդ կորուստը լուռ եմ տազնապում,
Ես այդ կորուսին ինչպե՞ս դիմանամ:

21.03.1982


Մարտակերտ

ՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ

Չափշփում է խոնավ ու թաց փողոցները
Խեղառ քամին,
Իսկ ծառերը նրա շնչից զգաստացած,
Լոռ,
Ամոթխած հարսի նման
Չկամորեն մերկանում են:

Արևը լուռ հեռանում է իր գեմիթից,—
Ստվերները երկարում են:

Կանգնած մայթին՝
Սրթսրթում են ծառերը մերկ
Ու ծածկվում են աղջամուղջի շղարշի տակ
Տուն ու այգի,
Փողոց ու մայթ...



Խ ՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություն գրելուց առաջ
Ով իմ կրակին ոչ թե ջուր,
Այլ ածուխ է լցնում,—
Նրա դռանն էմ,
Նրա գեթին ու խոնարհ ծառան էմ:

Բանաստեղծություն գրելուց հետո,
Մարած կրակ էմ:
Բաց և անթեղված պողերիս ուժով
Ջերմացված սրտին
Ու նրա բախտին տեր-տիրակալ էմ:

Իսկ թե ինչ-որ տեղ
Ինձ չեն եկթարկվում խոհերս հոգևած,—
Ես...բռնակալ էմ:



} ԱՎԱՏ

Ես սիրում եմ հոգևած քաղիկ ճամփաներով:

Բայց թե հանկարծ մի օր ընկնեմ ճամփակեսին,

Ես կձգտեմ կանգնել

Ու մահաւնայ...կանգնած:

Եվ փույթ չէ,

Թող ոտքերս մի պահ կանգնեն

Քանզի գիտեմ, գիտեմ,

Որ քաղերս պիտի՝ շարունակվեն...



Ա

Հոգնածությունն զգում եմ արդեն,
 Հոգնած ոտքերս նվում եմ արդեն,
 Հոգնած ձեռքերս ճշում եմ արդեն.
 —Հերիք է հոգնած օրերդ անճես,
 Հերիք է...ննջես,
 Հերիք է դու քեզ քո ձեռքով...ջնջես,
 Տեր կանգնիր ոգուդ, հողիդ ու քարիդ,
 Տեր կանգնիր հոգնած, հյուսված աշխարհիդ...
 Հոգնած բառերս չեն արտաբերվում,
 Տառ-տառ գալիս են՝ կուտակվում, պայթում,
 Քարս, անունս, հողս, կարոտս,
 Ո՞նց է, իրարից էլ չեն տարբերվում,—
 Արցախ եմ ասում՝ կարոտ է լսվում,
 Կարոտ եմ ասում՝ հող է զգացվում,
 Իսկ հող ասելիս՝ քար է հասկացվում,
 Իսկ քար ասելիս՝ հոգնում է շուրթս,
 Ծանթվում է շուրթս՝ մնում եմ...թոր։

Բ

Հոգնածությունն զգում եմ արդեն,
 Հոգնած օրերս նվում եմ արդեն,
 Հոգնած ձեռքերս ճշում եմ արդեն...
 ...Հոգնած ոտքերս մի կերպ քարշ տալով
 Ես հախարում իմ հուշերս անցած,—
 Անցած-չկորսված,
 Ու ռիտերիմին ձգտում այսօր էլ

Ոխով չնայել,
Բայց միշտ ուսխին՝ արյունով հարքած,
Մանապարհները իմ տունն են բերել,
Ու գրիչ-որդիդ մատյանը թողել,—
Զինվոր է՞ գրվել,
Ու մանկալ-որդիդ լծկանը թողել,—
Զինվոր է գրվել,
Ու կատաղել է ուսխն ավելի,
Ու...ավերվել է իմ հողն ավելի,
Ու ավարաչրվել—պարտվել է էլի
Երկիրս խուժած խուժանը խուժդուժ,—
Հեռացել անուժ:

...Բոլոր դարերում Այդպե՛ս է եղել:
Բոլոր դարերում արյո՛ւն է հեղվել:

Բոլոր դարերում՝ կոտորած-եղե՛նն:
Բոլոր դարերում՝ մահ-թալան-ավե՛ր:

Բոլոր դարերում հրդեհվել-վառվել
Ու ավերվել են քարե՛րը հայոց:

Բոլոր դարերում հրդեհվել-վառվել
Ու ավերվել են...դարե՛րը հայոց:

Բոլոր դարերում հալ շինականը
Զոհել է իրեն՝ գի՛րքը փրկելով,
Որ հարատևեն տառե՛րը հայոց:

Այդպե՛ս է եղել բոլոր դարերում...
Այդպե՛ս ենք ապրել բոլոր դարերում...

Գ

Հոգևածությունս զգում եմ արդեն,

Հոգևած ոտքերս նվում են արդեն,
Հոգևած օրերս ճոճվում են արդեն,
Հոգևած ձեռքերս ճշում են արդեն.

—Հայ գլխին կախված

Դու հի՛ն արհամախրք,

Որ ապրում ես դեռ վայրի մոլուցքո՛ւմ,

Մեր դարավերջի—

Դարասկզբյան նորացված չարի՛ք,

Դու՛ հայոց բախտի փլուզում մի նոր,

Դու՛ նորակերպված

Նոր Աբդուլ-Համի՛դ,

Ես էլ ի՛նչ արտով դիմեմ քեզ այսօր,

Դու ի՛նչ երեսով նայես ինձ այսօր,

Ու ինչպե՛ս ապրենք միասին, այսօր:

Ես հանգիստ խղճով ապրո՞ւմ եմ այսօր

Եվ հանգի՛ստ նայում սև... կերպարանքիդ,

Ու իմ ապրելուց դու...ցա՛յ ես զգում:

Դու ափերում ես, իսկ ես՛ արարում,—

Իմ արարումից դու ցա՛յ ես զգում:

Իմ արարումից գալլանում էլի,

Իմ արարումից մոլեգնո՛ւմ ես դու,

Ու ...որոշեցիր սպանել էլի՛

Սպանել, որ ես դեռ...հա՛յ եմ այսօր,

Բայց ես չմեռա՛,

Ինչպես չմեռա բոլո՛ր դարերում...

Դ

...Այդպե՛ս է եղել բոլոր դարերում,


Արյո՛ւն է հեղվել բոլոր դարերում,

Կոտորած-եղէնն՝ բոլոր դարերում,
Մահ-թաղան-ավեր՝ բոլոր դարերում:

Աչդպե՛ս չենք ապրել բոլոր դարերում:
Բայց մի՛ նո՛ր ցավով աչրվում է հոգիս
Մեր ամենադարչա ցավին լրացում,—
Մեր դարավերջյա՛ն կոտորածներից:
Եվ...այդոհանդէ՛քձ,
Հպարտ եմ, այո, որ հա՛յ եմ աչօր,
Անպարտ եմ աչօր, որ...հա՛յ եմ աչօր,
Ու թող իմ չկամն աչօր իմանա,
Որ ինչ էլ լինի՝ չեմ...գաղանա ես,—
Գա՛լը՝ մարդանա՛...

Ե

...Հոգնածությունս զգում եմ արդեն,
Հոգնած ոտքերս նվում են արդեն,
Հոգնած օրերս ճոճվում են արդեն,
Հոգնած ձեռքերս երկինք բռունցքված
Հոգնածությունից ճչում են արդեն...
Հոգնած բառերս չեն արտաբերվում,
Տառ-տառ գալիս են,—
Կոտակվում,
Պայթում...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էքսպրոմտ	5
	Տունը	4
Հայ ժողովրդի անկառնագիրը		5
	Ինքվին	7
	Իզաբելլային	9
	Կանչե, կունկ	11
	Մենք	12
	Ծիրագականչ	13
	Ես կուզեի լինել...	16
	Ճամայություն	17
	Ինձ ցավ տուր...	19
	Լեռները	20
	Երջանկություն... 21	21
	Տխրություն	22
	Գու ապրում ես...	23
Զբույց Պ. Սևակի դիմանկարի հետ		24
	Տխոր նոր տարի	25
	Գիշերային տրիդեաներ	26
	Մի կյանքի պատմություն	27
	Զոն գազելին	28
	Գազել սիրո	29
	Գազել պապիս	30
	Գազել տատիս	31
	Գազել մեղսական	32
	Գազել մորս	33
	Գազել պատրանքի	34
	Գազել տխրության	35
	Նվագներ արարվող լույսի	36
	Առաջին սերը	37
	Պապիս հերիսրը	38
	Տառս	39
	Աշնանային պատկեր	40
	Խոտտվանություն	41
	Հավատ	42
	1988	48

Գրական-գեղարվեստական հրատարակչություն

Արիս Արսենի Գրիգորյան

ՃԱՔԱԾ ԼՈՒՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություններ

Литературно-художественное издание

Арис Арсенович Григорян

ТРЕСНУВШАЯ ТИШИНА

Стихи

На армянском языке

Издательство «Ариак», Степанакерт, 1993

Խմբագիր՝ Հր. Մ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նկարիչ՝ Լ. Բ. ՂԱԼԱՅԱՆ

Գեղ. և տեխ. խմբագիր՝ Մ. Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

Սրբագրիչ՝ Ռ. Ե. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հանձնված է շարվածքի՝ 12.01.1993թ.

Ստորագրված է տպագրության՝ 17.02.1993թ.

Չափար՝ 60X84 1/32: Թուղթ՝ օֆսեթ: Տպատեսակը՝ «Արմենոնի»:

Տպագրությունը՝ բարձր: 1,9 պլավ. տպ. մամ., 3 հրատ. մամ.

Տպաքանակը՝ 1000: Պատվեր՝ 307

Գինը՝ պայմանագրային:

«Արցախ» հրատարակչություն, 374430, ք. Ստեփանակերտ,
Ն. Ստեփանյանի փող. 24

Издательство «Ариак», 374430, г. Степанакерт,
ул. Н. Степаняна, 24

ԼՂՀ պոլիգրաֆիայի, մամլո և գրքի առևտրի գծով պետական
կոմիտեի Ստեփանակերտի տպարան:

374430, ք. Ստեփանակերտ. Վարդան Մամիկոնյանի փող. 21:

Степанакертская типография Госкомитета по полиграфии,
прессе и книжной торговле НКР.

374430, г. Степанакерт, ул. Вартана Мамиконяна, 21.